Հեքսպանթեն **100** մգ **+ 16** մգ

Դեղաբանական ձև. հեշտոցային մոմիկներ:

Բաղադրություն. 1 մոմիկը պարունակում է ակտիվ նյութ՝ դեքսպանտենոլ 100 մգ + քլորհեքսիդին բիգլյուկոնատ16 մգ (քլորհեքսիդին բիգլյուկոնատի լուծույթի տեսքով 20% - 80 մգ):
Օժանդակ նյութեր. Հիմք մոմիկների համար. ՊԷԳ 400 և ՊԷԳ 1500:

Դեղաբանական խումբ. հյուսվածքների վերականգնման խթանիչ:

Ֆարմակոդինամիկա
Կոմբինացված դեղ տեղային օգտագործման համար գինեկոլոգիայում, որը ցուցաբերում է վերականգնող, հակամանրէային և մետաբոլիկ ազդեցություն:
Քլորհեքսիդինը ակտիվ է գրամդրական և գրամբացասական միկրոօրգանիզմների հանդեպ. Treponema pallidum, Chlamydia spp., Ureaplasma spp., Neisseria gonorrhoeae, Trichomonas vaginalis, Gardnerella vaginalis, Bacteroides fragilis, Herpes virus: Դեղի հանդեպ թույլ զգայուն են որոշ շտամներ. Pseudomonas spp., Proteus spp., նաև կայուն են թթվակայուն բակտերիաների նրանց սպորների, սնկերի և վիրուսների հանդեպ:
Դեքսպանտենոլը խթանում է լորձաթաղանթի ռեգեներացիան, վերականգնում բջջային մետաբոլիզմը, արագացնում է միտոզը և մեծացնում կոլագենային թելերի ամրությունը: Չի խախտում լակտոբացիլների ֆունկցիոնալ ակտիվությունը: Պահպանում է ակտիվությունը (չնայած մի քիչ նվազեցված) արյան և թարախի առկայության ժամանակ:

Ֆարմակոկինետիկա
Քլորհեքսիդին բիգլյուկոնատը պրակտիկորեն չի ներծծվում ստամոքսաղիքային տրակտից: Պատահական կուլ տալու դեպքում 300 մգ Cmax հասնում է 30 րոպե հետո և կազմում է 0,206 մկգ/լ: Դուրս է բերվում հիմնականում կղանքի միջոցով 90 % , 1% -ից քիչ երիկամներով: Ներհեշտոցային կիրառման ժամանակ գրեթե չի ներծծվում, համակարգային ազդեցություն չի թողնում:
Դեքսպանտենոլ – տեղային օգտագործման ժամանակ արագ ադսորբցիայի է ենթարկվում լորձաթաղանթի կողմից և վերածվում է պանտենոյաթթվի, կապվում է արյան պլազմայի սպիտակուցների հետ (հիմնականում բետա – գլոբուլինների և ալբումինի հետ):

Կիրառման ցուցումներ

- Սուր և խրոնիկական վագինիտներ:
- Էնդո/էկզոցերվիցիտներ (արգանդի պարանոցի բարդացած էկտոպիաներ):
- արգանդի պարանոցի սպեցիֆիկ էթիոլոգիայի էրոզիաներ (կոմպլեքս բուժման կազմում):

- հեստոցի լորձաթաղանթի և արգանդի պարանոցի դեստրուկտիվ մեթոդով բուժումից հետո ռեգենացիայի լավացման համար (ինչպես նաև դիաթերմոկոագուլյացիա, կրիոդեստրուկցիա, լազերային դեստրուկցիա) հետվիրահատական և հետծննդյան շրջանում:

Հակացուցումներ

Գերզգայունություն ակտիվ նյութի կամ օժանդակ նյութերից որևէ մեկի հանդեպ:

Կիրառման ձև և դեղաչափում

Կիրառում են ներհեստոցային. Կիրառումից առաջ մոմիկը հանել խցիկից:

Բուժման նպատակով. 1 մոմիկից օրը 2 անգամ (առավոտյան և երեկոյան) 7-10 օր:

Ըստ անհրաժեշտության հնարավոր է բուժման ընթացքի երկարացում մինչև 20 օր:

Կողմնակի երևույթներ

Հնարավոր են ալերգիկ ռեակցիաներ, քոր, դեղը օգտագործումը դադարեցնելուց հետո երևույթները անհետանում են:

Նախազգուշացումներ

Հեքսպանտենը անհամատեղելի է անիոնային խումբ պարունակող դետերգենտների հետ (սապոնիններ, նատրիումի լաուրիլսուլֆատ, նատրիումի կարբոքսիմեթիլցելյուլոզ) և օճառի հետ, եթե այն կիրառվում է ներհեստոցային: Արտաքին սեռական օրգանների հիգիենիկ խնամքը չի ազդում Հեքսպանթեն մոմիկների արդյունավետության և կիրառման վրա, քանի որ այն օգտագործվում է ներհեստոցային:

Հղիություն և կրծքով կերակրում

Հղիության և կրծքով կերակրման ժամանակ հակացուցված չէ, քանի որ Հեքսպանթենը ազդում է հեստոցի վրա տեղային, պրակտիկորեն չի ներծծվում:

Թողարկման ձև

10 հեստոցային մոմիկ խցիկում, 2 խցիկ ներդիր թերթիկով տուփում:

Պիտանիության ժամկետ

2 տարի:

Չօգտագործել տուփի վրա նշված պիտանիության ժամկետի ավարտից հետո:

Պահպանման պայմաններ

Պահել 25°C-ից ոչ բարձր ջերմաստիճանում, չոր, լույսից պաշտպանված տեղում:

Պահել երեխաների համար անհասանելի վայրում:

Բացթողման կարգ

Առանց դեղատոմսի: